

ՄԱՐԳԱՐԻՆ ԿԵԼՆՈՒ ՎԻՍՃԱՆԿԱՆ ՆՊԱՏԱԿՐ*.

ԳԼՈՒԽ ԱՌԻՆԻՆ.

I

Կեանքը մարդու համար մի մեծ բարիք է, անգնահատելի մի զանձ: Կեանքի և նրա վիճակների մէջ, նրա զարգանքների ու բազմազան արտաքին հանգամանքների մէջ, նրա ոյժերի ու իրան յատուկ դործողութիւնների մէջ՝ պարունակում է մարդու համար բաւականութեան ու բախումութիւնների և վայելչութեան մի անսպասելի աղբիւր: Մարդուն ուրախացնում են նոյն իսկ զուտ մարմնական հանգամանքներ, որոնք նա զգում է շօշափում է, ինչպէս օրինակ՝ պատանեկութեան կենսական ոյժերի կատարեալ բողբոջիւր, կատարեալ առողջութիւնը և հանգըստութեամբ ամրապնդած կաղմուտների զուարթութիւնը: Գոյութեան ապաւորութիւնները, որ ստանում ենք մեզ շրջապատող բնութիւնից, պատճառում են շատ պայծառ, թէ և անցողական զգացմունքներ: Բնութիւնը մերժ մարում-թալկանում է, մերժ նորից կենդանանում և արտայայտւում բազմապիսի երեւոյթներով, որոնք հիացնում են մարդուն կամ իրանց վսեմութեամբ, կամ թէ զերում են իրանց խաղաղ չքահղութեամբ և դիւթի զեղեցկութեամբ: Այնուհետեւ մարդս վայելում է մի շարք անընդհատ յաջորդող բաւականութիւնների, ձգտելով զանազան նպատակների և որոշ կերպով պատկերացնելով իւր ձգտումների առարկաները և յաջողութեամբ հեռացնելով արգելք լինող բոլոր խոչընդոտները՝ վերջապէս հասնում է տիրապետում է նրան: Սակայն մեզանից իւրաքանչիւրի ուրախութիւնները կարող են լինել էլ աւելի մաքուր և կայուն այն ժամանակ, երբ մենք անջատուելով մարմնական և առհասարակ արտաքին աշխարհից, խո-

րասուզուենք մեր մէջ և կենդրոնանանք մեր հոգեւոր կեանքի շրջանակում: Այստեղ, յիշողութեան պահպանութեամբ, մտաւոր հաշիւների առաջ, ծագում են անցեալի պատկերները, պատկերներ՝ որոնք թանգ են մեր սրտի համար, որոնք լուսաւոր են և ժամանակի ընթացքում մարքրուած ու զտուած ամեն պակասութիւններից: Նրանք պատկանում են անդարձ անցեալին, որի մասին մտածելիս՝ մարդու սիրտը յօււում է աղիւրութեամբ, իսկ նրա հետ շփուելուց՝ մարդու հոգին աւելի զտուում ու քնքշանում է: Այստեղ՝ հոգեւոր կեանքի մէջ, երեւակայութիւնն ստեղծում է ապագայի իդէալները, որոնց մէջ պարունակում է այն ամենը, ինչ որ ծանօթ են մարդուն, այն է՝ ամենալաւը և ամենազեղիցիկը: Այդ զաղափարների իրադործումը հեռու է, աւելի հաւանական անհասանելի: Բայց հենց նրանց պարզ կերպով միայն մտարեւելն էլ մարդու հոգին լրցնում է քաղցր յուզմունքով: Այստեղ, վերջապէս դործում է խելքը և միտքը կատարում է իւր գործը: Բայց խելքի գործունէութիւնը և մտքի կենդանի ու անդադրում աշխատանքը, ինքն ըստ ինքեան, կեանքի միւս կողմերից անկախ, ամենամեծ վայելչութեան մի անսպաս զանձ է: Դանել հատ հատ փաստերի և երեւոյթների մէջ եղած կապը, եզրակացութիւններ հանել, թափանցել մարդկանց գործողութիւնների ու յարաբերութիւնների մէջ, գուշակել այդ գործողութիւնների և յարաբերութիւնների զաղանի զսպանակները, տեսնել, — հազիւ ձեռք բերած փաստերի հիման վրայ՝ անձնական բարեկամութեան մասնակցութեան և ընկերական պարզամտութեան շնորհիւ, — պատրանք, կեղծիք և թաղցրած ամենաշնչին չարիքը, իսկ ցամաք, կոպիտ բնութեան մէջ, որից մեծամասնութիւնը խորշում է, — ռսկէ սիրտ, հետեւել հոգու իսկական շարժողութիւններին, — այս բոլորն այնպիսի վսեմ զուարճութիւններ են, որպիսիք չի կարելի համեմատել ոչ մի բանի հետ և որ ոչ մի բանի հետ չի փոխիլ այն մարդը, ով ճաշակել է այսպէս առաջ, մտածողութեան քաղցրութիւնը, թէ և այդ քաղցրութիւնը յա-

* Մակնայի գիւղատնտեսական Բարձրագոյն ձեւարանի Աստուածաբանութեան պրոֆեսոր՝ Նիկողայոս Բահմայ, Ելէոնցի:

ճախ թուանաորում է սրտի կծու խայթոցով՝ մանաւանդ մի քանի անպասելի յայտնագործութիւնների ժամանակ։ Այստեղից էլ ծագում է մարդու մէջ ոչ մի բանով չոչնչացող ծարաւ և մեծ սէր դէպի կեանքը։ Այդ ծարաւի առաջ ամենածանր տանջանքներն անգամ անգոր են թուում։ այդ սէրը չի թուլանում նոյն իսկ բաց գերեզմանի առաջ։ Մարդն արդէն վայելել է կեանքը՝ նրա ոյժերը վերջնականապէս սպառուել են։ Նա հասել է երկրային գոյութեան սահմանին։ սակայն նրա մէջ դեռ վառ է նախկին սէրը դէպի կեանքը։ Նա կամենում է գէթ մի անգամ ևս տեսնել նոր օտար արշալոյսը՝ նայել Աստուծոյ աշխարհին։ Ըսել ծանօթ ձայներ ու խօսքեր կամ առ նուազն՝ մի անգամ ևս զգալ և հասկանալ՝ որ նա դեռ կենդանի է նախկին կեանքով։ Մարդու մէջ այդ սէրը դէպի սեպհական կեանքը շարունակում է առհասարակ ամբողջ կեանքի ընթացքում։ Նրան ուրախացնում է ամեն-մի կենդանի իր։ Ըստ որում կենդանութիւն ունի և ամեն-մի անգամ մի աննշան կեանքի քայքայումը՝ օրինակ՝ մի համեստ ծաղկի կեանքից կտրուելը, թառամիլը, ցաւադին կերպով արձագանք է դանում նրա սրտում։

II

Այնու ամենայնիւ՝ հնարաւոր են և յաճախ լինում են այնպիսի բոպէներ, երբ այդ մի և նոյն կեանքը իւր բազմազան ձգտումներիով ու շահերով, ուրախութիւնների ու վայելչութիւնների այդ անսպառելի աղբիւրը մեզ համար կարող է կորցնել իւր բոլոր արժէքն ու բոլոր իմաստը։ Եւ մեզանից իւրաքանչիւրը, եթէ նա անասնական կեանքից մի քանի աստիճաններով բարձր է կանգնած, իմացիլ է և զիտէ նմանօրինակ բոպէներ։ Այդ այն բոպէներն են, երբ մենք հակառակ մեր կամքի ձանձրացուցիչ այս հարցերի ազդեցութեան տակ՝ «ինչո՞ւ, ինչո՞ւ համար է այդ», սկսում ենք վերստին դնահաստել այն ամենը, ինչ որ մենք կատարել և կատարում ենք, ինչին ձգտել և ձգտում ենք։ Ենթադրենք՝ թէ երկար նեղութիւններից ու ջանքերից յետոյ՝ մենք մի որոշ աստիճանով մեզ տեղեկ ենք աստուածայինին։ Նա ի՞նչ տուեց մեզ։ Արդեօք սեղանի վրայ մի աւելորդ կերակուր։ Հանգերձի մի աւելորդ փոխնորդ։ Թէ՛ բնակարանի մէջ մի քանի յարմար սենեակներ։ Բայց արժէ՞ր արդեօք այդ բոլորը գնել երկարամեայ լարուած աշխատանքի դնով։ Թերեւս յաճախակի և ստորութիւններով։ Միլիոնաւոր մարդիկ շրջում են առանց նմանօրինակ կասկածաւոր բարիքների։ միւս կողմից՝ շատերն ունենում են աւելի մեծը, բայց չի նշմարուում, որ ուրախութիւնը նրանց կեանքի մշտական ուղեցոյցը լինի։ Կամ թէ՛ մենք լարուած ուժով օրոնել ենք հօշակ ստանալ և հասել ենք նրան մի որոշ չափով, և մեր գլխին փառքի պսակ են դրել։ Բայց ինչի՞ համար է այդ։ Ո՞րքան կարճ ժամանակեայ է այդ պսակը։ Առաւօտեան, երբ դնում էին պսակը՝ նրա վրայ դեռ կար ջերմանոցի վախ լոռոր, բայց երեկոյեան նա արդէն թառամեց։ Ընդ սմին երեւում է, որ այդ համանման պսակների համար շատ շատ զուլններ կային և կան և որ այդ պսակադիրներին շատերը խապա մոռացում՝ տրտմութեամբ քարշ են տալիս իրանց օրերը։ Ամօթալի է թուում մեզ համար ունայն սնափառութիւնը։ Կամ թէ՛ մենք ձեռք ենք բերել գիտութեան որ և է նշանաւոր ծիւղ և անուանուում ենք զիտնական։ Նորից հարց՝ ինչի՞ է պէտք այդ։ 2^է որ մեր գիտութիւնները համեմատած ընդհանուրի գիտութեանց հետ՝ մի կաթիլ ջուր է ծովի մէջ։ Եւ որքան անկայուն, անհաստատ է այն ամենը, ինչ որ մենք իւրացրել ենք։ Այն տեսութիւնները, որոնք մենք ընդունել ենք որպէս ամենաստոյգ՝ համարուում են շատ միակողմանի և խախտու օրոնց տեղ յետադայում բռնում են ուրիշները։ Այդպիսով՝ ուրեմն, նրանք ի՞նչ են տալիս մեզ։ Բայց նայեցէք. ահա այս կամ այն անձն, որ ոչինչ չէ իմանում կամ չէ կամենում իմանալ, այնուամենայնիւ ի՞նչպէս դոհ է իրանով և ամեն բանով, ի՞նչպիսի երանական ժպիտ է խաղում նրա երեսին։ Եւ վերջապէս՝ ի՞նչ բան է հէնց ինքը կեանքը։ ինչացո՞ւ է նա։ — Ես ապրում եմ որպէս առանձին մի անհատ՝ ըստ երեւոյթին՝

Բերից յետոյ՝ մենք մի որոշ աստիճանով մեզ տեղեկ ենք աստուածայինին։ Նա ի՞նչ տուեց մեզ։ Արդեօք սեղանի վրայ մի աւելորդ կերակուր։ Հանգերձի մի աւելորդ փոխնորդ։ Թէ՛ բնակարանի մէջ մի քանի յարմար սենեակներ։ Բայց արժէ՞ր արդեօք այդ բոլորը գնել երկարամեայ լարուած աշխատանքի դնով։ Թերեւս յաճախակի և ստորութիւններով։ Միլիոնաւոր մարդիկ շրջում են առանց նմանօրինակ կասկածաւոր բարիքների։ միւս կողմից՝ շատերն ունենում են աւելի մեծը, բայց չի նշմարուում, որ ուրախութիւնը նրանց կեանքի մշտական ուղեցոյցը լինի։ Կամ թէ՛ մենք լարուած ուժով օրոնել ենք հօշակ ստանալ և հասել ենք նրան մի որոշ չափով, և մեր գլխին փառքի պսակ են դրել։ Բայց ինչի՞ համար է այդ։ Ո՞րքան կարճ ժամանակեայ է այդ պսակը։ Առաւօտեան, երբ դնում էին պսակը՝ նրա վրայ դեռ կար ջերմանոցի վախ լոռոր, բայց երեկոյեան նա արդէն թառամեց։ Ընդ սմին երեւում է, որ այդ համանման պսակների համար շատ շատ զուլններ կային և կան և որ այդ պսակադիրներին շատերը խապա մոռացում՝ տրտմութեամբ քարշ են տալիս իրանց օրերը։ Ամօթալի է թուում մեզ համար ունայն սնափառութիւնը։ Կամ թէ՛ մենք ձեռք ենք բերել գիտութեան որ և է նշանաւոր ծիւղ և անուանուում ենք զիտնական։ Նորից հարց՝ ինչի՞ է պէտք այդ։ 2^է որ մեր գիտութիւնները համեմատած ընդհանուրի գիտութեանց հետ՝ մի կաթիլ ջուր է ծովի մէջ։ Եւ որքան անկայուն, անհաստատ է այն ամենը, ինչ որ մենք իւրացրել ենք։ Այն տեսութիւնները, որոնք մենք ընդունել ենք որպէս ամենաստոյգ՝ համարուում են շատ միակողմանի և խախտու օրոնց տեղ յետադայում բռնում են ուրիշները։ Այդպիսով՝ ուրեմն, նրանք ի՞նչ են տալիս մեզ։ Բայց նայեցէք. ահա այս կամ այն անձն, որ ոչինչ չէ իմանում կամ չէ կամենում իմանալ, այնուամենայնիւ ի՞նչպէս դոհ է իրանով և ամեն բանով, ի՞նչպիսի երանական ժպիտ է խաղում նրա երեսին։ Եւ վերջապէս՝ ի՞նչ բան է հէնց ինքը կեանքը։ ինչացո՞ւ է նա։ — Ես ապրում եմ որպէս առանձին մի անհատ՝ ըստ երեւոյթին՝

ինձ յատուկ առանձնացատկութիւններով: Եւ յիրաւի ես մի անհատ եմ ուրիշ միլիոնաւոր կեանքերի և անձնաւորութեանց շարժանում և շատ նման նրանցից շատերին և և նրանք ամենքն էլ շատ նման են միմեանց: Տեսար մէկին պատահեցար այնուհետեւ երկրորդին և բացականչու՞մ եմ՝ «Հա՛, թուում է թէ մենք ծանօթ ենք»: Եայտնի շրջանում ես որոշ տեղ եմ բռնում, որոնում և զբաղում եմ ծանօթների որոնում եմ ինձ հետ սրտով մտերիմներին, նոյնը հատուցանում եմ նրանց և մտածում, իմ ներկայութիւնն այստեղ անհրաժեշտ է և իմ բացակայութիւնը մեծ կորուստ պիտի նշմարուի: Բայց ահա հանգամանքները քշեցին ինձ մի այլ հեռաւոր շրջան: Իսկոյն և եթ իմ տեղ պատրաստի կանգնած են տասնեակ դործիչների որոնցից մէկն ու միւսն արդէն բռնել է իմ տեղը: Իմ ծանօթները շուտով գտան իրանց համար նոր ծանօթի և այն մարդիկ որոնք իրանց սրտի դադանիքը բռնում էին իմ առաջ արդէն ուրիշների առաջ են բանում իրանց հոգին — սիրտը: Իսկ ես բոլորովին մոռացուած եմ ամենքից և նշանակում է՝ որպէս յայտնի և որոշ անձնաւորութիւն՝ ոչինչ եմ՝ եղբի անպէտք եմ եղել: Եւ ահա կեանքի այդպիսի վերստին գնահատութեան և վերատուգութեան բռնկներումս ի պատասխանի այս հարցմունքին՝ «Ինչ է, ինչու համար է այդ ամենը» — մեր կեանքը թռչում է մեր առաջ որպէս փոշի կորցնում է մեր աչքում իւր բոլոր արժէքն ու իմաստը, որպէս մի դատարկ և յիմար կատակ և մենք ակամայ կրկնում ենք հին իմաստունի ամենքին յայտնի խօսքերը՝ «Ունայնութիւն ունայնութեանց» զի ամենայն ինչ ընդունայն է: Այս ծանր են այդ բռնկները: Սիրտդ լցուում է անվերջ կարօտով անհետանում է ամեն մի եռանդ, չափազանց ուժեղ կամք պէտք է ունենալ որպէս զի հարկադրէ քեզ որ և է դործի կպչիլ երեւալ հասարակութեան մէջ: Եւ հաստատապէս մնում է միայն մի ցանկութիւն՝ հեռանալ ամեն բանից և ամենքից և որ գլխաւորն է՝ ինքն իրանից, այսինքն՝ կեանքից: Բայց այս ինչ գրութիւն է: Այս մի տեսակ ցաւալի հեռեանք չէ՞ արդեօք

ցնդուած և խորտակուած սրտի վշտի: Արդեօք այս խելքի մտածողութեան վերջին ծայր միակողմնի ուղղութեան հեռեանք չէ՞ որը յաճախակի աշխատում է զանել որ և է հիւանդոտ զուարճութիւն, որպէս զի կարողանայ զլորել և խորտակել ամենը ինչ որ սուրբ է և թանկագին և բոլորի խորտակման մէջ, տեսնել իւր ոյժերի երեւան գալը և իւր որ և է բանից անկախ լինելն արդեօք: Այո՛, այդ հիւանդոտ և անբնական զբոսութիւն է և բարեբաղդարար, շատ դէպքերում, արագ անցողական Այնուամենայնիւ՝ նա յառաջանում է ոչ պատահական պատճառներից: Մտ ինքն ըստ ինքեան պայմանաւորում է այն հարցը որն սկսուել է մեր մտածողութեան մէջ, որը մի առ ժամանակ մնացել էր անպատասխան, առհասարակ մարդկային կեանքի վերջին վախճանական նպատակի հարցն է այդ, որի մասին մտածելը դուրս է վանուում մեր զիտակցութիւնից, առհասարակ, մասնաւոր նպատակների երեւոյթներով, որոնք իրանց գոյութեամբ ոչինչ են, բայց և որին հասնելու ձգտելու համար ներկայումս ուղղում ենք մեր բոլոր ոյժերը: Մի և նոյն ժամանակ մեր բանականութիւնը չի կարող բաւականութիւն գտնել մասնաւոր ժամանակաւոր և չնչին նպատակների մէջ, հասնելով որոշ աստիճանի զարգացման՝ նա սկսում է որոնել ընդհանուր և անանց նպատակների որ մշտական լուսով լուսաւորէր ամբողջ մարդկային կեանքը՝ որ մասնաւոր նպատակներին մի նշանակութիւն տար, ուղղելով նրանց դէպի մի կէտ, որ ամենքին մօտեցնէր ու միաւորէր իւր մէջ և իւրաքանչիւրին հրահարութեամբ իւր տար ամրապէս և առանց կանգ առնելու յառաջ ընթանալ և լուսաւոր յոյսերով նայել ապագային: Եւ մինչդեռ այդպիսի նպատակ չի գտնուած և ընդունուած, մեզ համար անխուսափելի կը լինի մեծ թէ փոքր չափով, այն ծանր դրութիւնը որպիսին մենք նկարագրեցինք վերեւ: Բայց այդ օրինակ նպատակի մասին հարցն արդեօք բանականութեան համար մի դատարկ հարց չէ՞ որ ընկնում է պարապ վերացականութեան մէջ, որ անջատուում է իսկական կեանքից և ամենօրեայ խնդիրներից: Ո՛չ, արդ՝ մտածու-

դուրսն և կանքի տրամադրանք և օրհասական հարցն է: առանց որի վճռի և որի հետևանքով միտքը չըթաղուում թուրանում ու փոքրանում է: և կանքը զառնում է այդպիսով տնտեսական և ոչ մարդկային գիտական կանք: Ուստի և մարդկային կանքի վերջին նպատակի մասին եղած հարցը ամեն ժամանակ վճռու է և այժմ էլ վճռում է մարդկութիւնը: և այդ մասին բաւական թուով վճիռներ է տուել: Մեզ զբաղեցնող հարցը մարդկային կանքի համար անշափ կարեւոր լինելով մենեղն ժամանակ պատկանում է և ամենագիտական թուին: Այս է պատճառը որ այդ հարցն այնքան բազմազան վճիռներ ունի որոնք տեսականի կողմից անբաւարար են և ցաւալի ազդեցութիւն ունին իրական և գործնական կանքի վրա: Ժանօթանանք այդ վճիռներից մի քանիսի հետ օրինակ այնպիսիների որոնք ըստ իրանց տարածման այս կամ այն ժամանակում և ըստ իրանց փոխադարձ ազդեցութեան՝ մարդկանց կանքի և գործունէութեան վրայ կարող են համարուել: և իրօք համարուում են ամենից նշանաւորները: կանքի նպատակի մասին հին վարդապետութիւններից նշանաւոր են և ուշադրութեան արժանի շնորհաց և Յունաց վարդապետութիւնները: որոնց վրայ և մենք ամենից առաջ կանգ կառնենք:

III

Հնդկաց վարդապետութիւնը կանքի նպատակի մասին կորդուած լինելով առհասարակ հնդկական աշխարհատեսութեան հիմնական դրութեանց հետ հետեւեալն է: «Երբաւի՛ ճշմարտագէտ գոյութիւն ունի միայն Բրահման, այն մեծ հոգին որ միակ և յաւիտեական է: անբնութիւն և անտեսանելի: առանց որ և է մեծութեան և չափի և առանց որ և է յատկութեանց: Հոգի՛ որի մէջ չը կան ոչ առաքինութիւն ոչ մորութիւն և ոչ զիտութիւն: որը նման է ջինջ տարածութեան: որի մէջ ոչինչ չը կայ: և որը ամենամեծ դատարկութիւնն է: Այդ Հոգու գոյութիւնը միայն և եթ ճշմարիտն է և իսկականը: Ինչ վերաբերում է աշխար-

հին, որ չըջապատած է մեզ, ոչ մասնօր մարդկանց միայն թուում է որպէս գոյութիւն ունեցող: Եւ յիշաւի՛ աշխարհս որ անկայուն է և անշարժ: ունի գոյութեան մի ձև: նա ոչ այլ ինչ է: և եթ ոչ մի կրկնութիւն ջրի մի տեսիլք անջուր անապատում որ գրաւում է զէպ իրան անցորդին: Սոյնպիսի մի ցնորք է և իւրաքանչիւր առանձին էակի կանքը: ընդ նմին և մարդկային կանքը: Սա մի խաղ է: մի ցնորք: ունայնութիւն և զնչութիւն: Մահկանացուի օրերն անհետանում են: որպէս ջրի գոգդնուն կաթիլը բոտոսի տերեւի վրայ: որպէս հեղուկ որ չորանում է տալից: կանքը լինելով մի տեսիլք: ուստի և անկատարելութեան և տաղնապնների աղբիւր է: Ով ապրում է: նա չի կարող չը սանջուել: բայց այն՝ ինչ որ մարդու մէջ գլխաւորապէս դառնում է չարութեան աղբիւր: այդ միայն նրա անձնական լեսն է: որ ձգտում է զէպի առանձնութիւն և կռիւ է մղում իւր անկախ կեանքի համար: Եւ բոլոր կրքերի աղբիւրն է: նա հեռացնում է Մարդուն Աստուածանից: միակ ճշմարիտ տոտուածային կեանքից: աշխատելով յետ կասեցնել այն ցնորական գոյութիւնը: հաստատել նրա զէպի Աստուածութիւնը: եղած յարաբերութեան անկախութիւնը: որը ճշմարիտ գոյութիւն է: Աշխարհում գտնուող հէնց այդպիսի ցնորքների տեսակէտից՝ մարդկային կանքի վերջին նպատակն է և պէտք է լինի՛ ի մի ձուլուիլ միակ և յաւիտեական իրական էութեան հետ: այն նմանութեամբ: ինչպէս որ կաթիլը ձուլուում է ովկիանոսի հետ: և ձուլուելով՝ անհետանում է անգառնալի կերպով: յաւիտեան կորցնելով նրա մէջ իւր երեւակայական անկախութիւնը: Ամենից ուղիղ և միակ ճանապարհը զէպի այդ նպատակը հետեւեալն է: ոչնչացնել իւր մէջ զէպի աշխարհը: ձգտող ամեն մի երեւոյթ և բոլորովին մոռացութեան տալ նրան: սպանել իւր մէջ միաբն ջանկութիւնը և ամեն տեսակ զգացումն: Միանգամ որ հասար գրան: հասած է: և կանքի նպատակին: Այստեղից հետեւում է: որ ճշմարիտ իմաստունը նա է: որ կանգնած է իւր էութեան վախճանական նպա-

տակի առաջ, ով որ իրանից ոչ առաջ ու
յետոյ, ոչ յաջ ոչ յահեակ ոչինչ չէ տեսնում
և ոչ մի բանով չի յուզուում չի հետաքրքր-
ուում ով չի զգում ոչ զայրոյթի ոչ քաղց և
ոչ զրկանք, ով ազատ է անկախութեան զգա-
ցումից, ոչ բարութիւն է, ոչ չարութիւն,
որ միակերպ անտարբերութեամբ է նայում իւր
որդիքիւնց վրայ, ինչպէս և վոյքիւնի գազան-
ները վրայ: * Այսպէս է հին և ժամանակա-
կից հնդկացիների վարդապետութիւնը մարդ-
կային կեանքի վախճանական նպատակի մասին:
Բայց արդեօք զսփայցումն է այն, Ընդունակ է
արդեօք հասկանալ կեանքը և հասկանալով
հանգստացնել և ուրախացնել մարդկային սիր-
տը, տալ նրան առջողութիւն և եռանդ կամ-
քին: Ո՛հ, ո՛չ, ընդհակառակն՝ նա մարդկային
կեանքը դարձնում է աննպատակ և խլում է
նրանից ամեն մի ուրախութիւն: Եւ յիշաւի՛,
եթէ մարդու կեանքը ինչպէս առանձին էակ,
մի խաղալիկ է (phantom), երեակայութիւն է,
այն ժամանակ, հենց այդ պատճառով էլ,
նա ոչ մի նշանակութիւն չունի, և այդ նշա-
նակութիւնը ոչ օք էլ հնարաւորութիւն չու-
նի տալ նրան: Եթէ կեանքը ցնորք է, ուստի
նա չի կարող ունենալ որ և է խիստի նպա-
տակ, տալ ուրեմն և այդ նպատակի հետ կա-
պուած ամեն մի խորհրդածութիւն ոչ այլ ինչ
է, եթէ ոչ՝ մի դատարկարանութիւն: Այնու-
հետեւ եթէ զիսակցութիւնը ինքնաձանաշու-
թիւնը և զգացմունքը ծառայում են որպէս
աղբիւր անկատարելութիւնների և տանջանք-
ների, որպէս աղբիւր չարութեան, այն ժամա-
նակ պարզ է, որ քանի որ մարդս այդ կա-
րողութիւններն ունի մաքուր և հաստատուն
ուրախութիւնները նրան անմատչելի են: Աւար-
դապետութիւնն ասում է, որ մարդս պէտք
է մեռցնէ և վերջապէս սպանէ ինքն իր մեջ
ամեն մի միտք, զգացողութեան ամեն մի շար-
ժում: Այդպիսի դէպքում նա չի կարող հա-
շտ առնել ուրախութիւնը և ապագայում
ըստ որում գիտակցութիւնից և զգացմունք-
ների աշխարհից դուրս՝ մեզ համար անհա-

րին է դառնում մինչև իսկ աներեակայելի
որ և է ուրախութիւն: Այսպիսով հնդկաց վար-
դապետութիւնը մարդկային կեանքի վախճա-
նական նպատակի մասին՝ խլում է այդ կեան-
քից այն ամենը, ինչ որ նրա արժէքն է
կազմում, ոչնչացնում է այն ամենը, ինչից
յօրինուած է. և աւելի լաւ կլինէր, եթէ
այդ վարդապետութիւնը բոլորովին գոյու-
թիւն չունենար: Բայց նա սկիզբն առաւ
հնդկաց մէջ, և իւրացրին այն և մոցրին
կեանքի մէջ և որը կարելւոյն չափ, դարերի
ընթացքում իւր դորձը կատարեց: Հնդկա-
ցիք գոյութիւն ունին ցարդ ևս, կեանքի
նպատակի մասին ունեցած նրանց վարդապե-
տութեան դործնական եղբակացութիւնը ա-
մենքի աչքի առաջ է դրուած և այդ եղբա-
կացութիւնների հիման վրայ խղճալի կերպով
ճշնշուում է մարդու սիրտը: Աշխարհիս ամե-
նաբարեբեր երկիրը Հնդկացուն բաժին ընկաւ,
բայց նրա բաժինն այստեղ աւելի փութալի է,
քան աշխարհիս երեսին մի որ և է թշուառ
երկրի չքաւոր բնակչի բաժինը: Հիւսնալի է
իւր բազմատեսակութեամբ, արտասովոր դե-
ղեցիկ բնութիւն է շրջապատել Հնդկացուն,
բայց նրա հոգին մնում է փակ արտաքին
աշխարհի լատմացնող և աժխուժացնող ազ-
դեցութիւնների առաջ և մշտական կարօտի
անջնջելի կնիքը դրուած է նրա ամբողջ գո-
յութեան վրայ: Անպառախի հարստութիւն է
ցրուած հնդկական հոգի մակերեւոյթի վրայ
և լծագնուած է նրա խորքերում և նրա
ամենահին բնակիչը, ըստ մեծի մասին, աղ-
քատ է և թշուառ: Եւ ճնայելով հոգի ար-
տասովոր արտադրութիւններին՝ յաճախ մեռ-
նում է սովից: Եւ վերջապէս Հնդկացին
չէ պատկանում վատթարածին ցեղերի շար-
քին, որոնք ստոր են կանգնած մարդկային
ազգի միւս ցեղերից: Ընդհակառակն՝ հնդկաց
ցեղը պատկանում է աշխարհի երեսին ամե-
նից ընդունակ ազգերի թուին: Բայց կեանքի
ունայնութեան մասին ունեցած մտածողու-
թեան և մարդկային կեանքի գոյութեան անկա-
խութիւնը որպէս ցնորք, տեսիլք ընդունելով՝
նրա ոյժն այլ ևս չի գործում թմբում են նրա
հոգեւոր ոյժերը և այդ երկրքի աստղերի չափ
բազմութիւն ազգը կորազդուի հպատակու-

* Քիսանքու. Հին աշխարհի կրօնները քիսանքա-
կանի համեմատութեամբ 1. երես 203-209. 245—250
308—309.

Թեամբ որպէս բանուոր անասունս խոնարհեցնում է իւր զլուխն ու թիկունքը մի բուռն անկրեւս և անկուշտ եկուորների առաջ և մեռելային անտարբերութեամբ նայում է թէ ինչպէս այդ եկուորները կեղեքում են իւր մայրենի երկրի զանձերը Եւ յոյս չկայ դեռ թէ շուտով կդարթնեն այդ մեծ ազգի մեծամեծ ոյժերը

IV

Յունաց վարդապետութիւնն ասում է. «Ամեն ինչ գեղեցիկ է տիեզերքի մէջ, Գեղեցիկ են աստուածները Ուղիմպոսի այդ բնակիչները Երանց կեանքը ինքնուրոյն մարմնեղէն նիւթի և հողու ուժեղ կորովի մի հրաշալի ներդաշնակութիւն է Կեանքի չարութեան մասին նրանք տեղեկութիւն չունին Երաւ է Աստուածներին էլ օտար չեն թշուառութիւնըն ու վիշտը նրանք էլ միմեանց դէմ պատերազմ ու մարտ են մղում բայց այդ բոլորովին նման չէ կատաղի կռուի այլ միայն ընտանեկան վիճաբանութիւններ որպիսիք յաճախ վերջանում են այն անպատմելի կատակով— ծիծաղով, որն աւելի ապացոյց է նրանց պարզամտութեան և անխռովութեան Գեղեցիկ է մեղ շրջապատող աշխարհը, ամեն ինչ նրա մէջ աստուածային է ուրախ ներդաշնակ և վերցրած իրեւ մի ամբողջութիւն մարմնացած գեղեցկութիւն է Գեղեցիկ է մարդը որ տիեզերքի մի մասն է ընդ նմին ինքն էլ մի փոքրիկ տիեզերք է որի մէջ պարունակուում է այն ամենը ինչ որ ամենալուսն է աշխարհի մէջ։ Մարդունրքին աշխարհում չրկայ երկպառակութիւն ևս առաւել չրկայ այնպիսի մի բան որ յիշեցնէր հողու և մարմնու զգայականի և գերբնականի մէջ եղած տարաձայնութիւնը որպէս համանման երկպառակութիւն չրկայ նոյն իսկ Աստուածութեան մէջ։ Այդ ներդաշնակութիւնն անկարող են վրդովել նոյն իսկ կեանքի վիշտն ու նեղութիւնը։ Հէնց այդ վշտերն են որ օգնում են միայն երեւան հանելու ըստ ամենայնի լիակատար կերպով մարդկային հողու գեղեցկութիւնն ու վեհութիւնը Ծիւղերքի մէջ երբ թագաւորում է գե-

ղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը այն ժամանակ երկպառակութիւն չրկայ ոչ մարդու և նրան շրջապատող աշխարհի մէջ, ոչ էլ մարդու և աստուածների Աստուածները մարդկանց բարեկամներն են և չկայ նրանց մէջ անանցանելի միջնորմն Եւ եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուրախութիւն Իսկ կեանքի նպատակը՝ զուարճութիւնը Զսիրել կեանքը չղմայել նրանով, նրա բարիքներով նշանակում է աստուածանարգ լինել և Ահա այդպէս էր ուսուցանում հելլենացին որոշելով մարդկային կեանքի նպատակը Գեղեցիկ և զբաղիչ է այդ վարդապետութիւնը պայծառ հանդարտութեամբ և անխռով ուրախութեամբ է շնչում նա բայց ընդ նմին և վերջին ծայր թռուցիկ և մեակողմանի է այն շատ բան կեանքի մէջ մնում է մի անբացատրելի հանելուկ ուստի և նրա անանկութիւնն ակներեւ է նոյն իսկ փոքր հայեացք ունեցողի համար Ի հարկէ իրաւացի է որ շատ բան կայ գեղեցիկ տիեզերքի մէջ, բայց և գեղեցկութեան հետ կան նոյնպէս և շատ պլանդակութիւններ ներդաշնակութեան շարքում կայ և անկարողութիւն։ Այն ևս ուղիղ է որ մարդու մէջ կան շատ բարի և բարձրագոյն ձգտումներ, բայց քիչ չեն և չար ու ստոր ձգտումներ որոնք յաճախ կի երեւալով պարզօրէն վկայում են աշխարհումս զոյութիւն ունեցող բարոյական չարիքի մասին։ Ուղիղ է այն վերջապէս որ կեանքի մէջ պայծառ բուռներ ու ժամեր կան և ըստ երեւոյթին կարելի է կազմակերպել մի ուրախ պայծառ և անդորր կեանք, բայց չխօսելով արդէն իւրաքանչիւր քայլափոխում պատահող ընտանեկան վշտերի մասին միայն անխուսափելի անողորմ և խորհրդաւոր մահուան տեսիլը ընդունակ է նսեմացնել իւրաքանչիւր ուրախութիւն և և խռովել իւրաքանչիւր անդորր հանդստութիւն։ Եւ Յոյնը որքան էլ գեղեցիկ լինէր աշխարհը նրա հայեացքով, չէր կարող ուշադրութիւն չդարձնել կեանքի այդ վերջովոր միւս երեսի վրայ, յիշուի՛ նա դարձրեց մանաւանդ այն բանից յետոյ երբ լրացել էր նրա պատմութեան ծաղկեալ շրջանը

երբ նրա նահապետական մաքուր ու խիստ բարքերն ու սովորութիւններն աւանդութեանց կարգն անցան և երբ հասարակական շահերը զոհուեցին անձնական ետական շահերին: Եւ որքան Յոյնի ձգտումն զարդացած էր դէպի ներդաշնակութիւնը և վայելչութիւնը, այնքան նրան աւելի էր սարսափեցնում չարքերը և իրականի անհամաձայնութիւնը երեւակայականի հետ: Ուստի և Յունաստանի հանձարեղ գրողների արտադրութեանց մէջ մենք պատահում ենք դեղեցկութեան օրհներգութիւնների, կեանքի ուրախութիւնների և մարդկային հոգեւոյ բարձրագոյն յատկութիւնների նկարագրութեանց շարքում և՛ փսուր ողբերգական ձայնանիշների լսում ենք գանգատներ կեանքի մասին: Նրա ուրախութիւնների ունայնութեան մասին մարդկային բնութեան ապականութեան մասին: Խոր վշտի արտայայտութիւնից հեռու չէր նոյն իսկ Հոմերոսը, որի նկարագրութիւնների մէջ ճակատամարտները նմանում են խնջոյքների, իսկ խնջոյքներն այնքան ծոխ և ուրախ են երեւում, որ նրանց նախանձում էին նոյն իսկ Ողիմպոսի աստուածները: Հոմերոսի Նիլիականի մէջ պատահում են օրինակ՝ այսպիսի դառնութեամբ բացականչութիւններ. «Ամենազօր Աստուածները վիճակել են մեզ՝ թշուառ մարդկանց երկրի վրայ ապրել նեղութեամբ»: Եւ նաեւ աւելի յետագայ գրողների մէջ, ողբերգուների նման մանաւանդ ողբերգանգատներ աւելի յաճախ են պատահում և յաճախ դրուում են առաջին տեղը: Այսպէս՝ Սոփոկլէսի «Էդիպոսի մահը» ողբերգութեան մէջ մենք հանդիպում ենք հեռեւեալ կտորին. «Երանի, թէ չէիր ծնուել, ո՞վ մարդ—ահաւասիկ մեծ և նշանաւոր խօսք, բայց երբ արդէն լոյս տեսար, ճշմարիտ՝ ամենից լաւն այն էր, որ ըստ կարելոյն շուտով զնայիր այնտեղ, որտեղից եկել ես դու: Չե՛ն ալեկոծում մեզ արդեօք այլ և այլ ձախորդութիւնների օրինակ՝ սպանութիւն, վէճ, արիւնհեղութիւն, կոխ, քէն, նախանձ: Բայց վերջ ի վերջոյ սպասում է դաժան միակերպ, ցաւազար և զառամեալ ծերութիւնը, որ ամեն կողմից շրջապատուած է ձախորդութիւններիով: Բայց վիշտն ու թախիծը հին Յու-

նաց զրականութեան մէջ մենակ բանաստեղծական ծիւղի առանձնայատկութիւնը չեն կազմում: Եունական տրագիկան դեղահաշտ ստեղծագործութիւններն անգամ կրում էին զգալի զգացմանց կնիքը: Եունական վաղեմի քանդակագործների արտադրութիւնների մէջ այդ փսուր զգացմունքն արտայայտուած է խիստ անկենդան և ճակատագրին հլու-հնազանդ անդորրութեան մէջ: Ինչ վերաբերում է յետագայ արտադրութիւններին, այստեղ նոյն իսկ այնպիսիների, որոնք կասեա հէնց սպրում են միայն կեանքի և զուարճութեան համար, նրանց խաղաղ ու գեղեցիկ դէմքերի վրայ դրոշմուած են որ և է բողբոջագողանի կարօտ: Ընդհանրապէս նրանք արտայայտում են այն ներքին ծարաւի նշոյլը, որը երբեմն տանջում է մեզ մեր կենսական լիակատար վայելչութիւնների ժամանակ, գեղեցիկ բայց կարճատեւ գոյութեան միջոցին: Այն է՝ մշտական ծարաւ դէպի ինչ որ բարձր, դէպի երկնայինը: Բայց ի՛նչ են ապացուցանում այդ փսուր այնպիսիների, այդ փսուր դժերը յուսական բանաստեղծութեան անմահ ստեղծագործութիւնների և քանդակագործութիւնների մէջ: Նրանք պայծառ վկաներ են իրանց այն վարդապետութեան անկարողութեան մասին, թէ ամեն ինչ աշխարհում գեղեցիկ է, թէ կեանքը ուրախութիւն է և թէ կեանքի նպատակը՝ աշխարհի բարեքների վայելչութիւնն է: Նրանք, որպէս կշտամբանք այդ վարդապետութեան, բարձրաձայն յայտարարում են, թէ կեանքը իր վախճանական նրպատակով, Յոյնի համար ինչպէս եղել է, նոյնն է մնացել յաւէտ՝ որպէս անլուծանելի, չարատանջ մի հանելուկ:

(Եւրոպական)



2. Կարբիկը՝ Արտուսը և նրա կապը ֆաղստիկոսութեան ընդհանուր գործացման հետ և նաեւ կոնքրետ իդիպմանը. II, հրկ.՝ 214, 215, 318, 319.